

**VIII. ՀՀ 2008թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ**

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2008 թվականի համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար (01.03.02.01 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2009թ. կազմել է 602517.1 հազ. դրամ՝ նախատեսված 623755.4 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 96.6%-ով (2007թ.-ին՝ 96.5%),
- պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման համար (01.03.02.02 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2009թ. կազմել է 241896.6 հազ. դրամ՝ նախատեսված 252129.7 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 95.9 %-ով (2007թ.-ին՝ 96.1%),
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ (11.01.01.01 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2009թ. կազմել է 1413.0 հազ. դրամ՝ նախատեսված 1440.0 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվել է,
- միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով 2008թ. ֆինանսավորումը կազմել է 38012.8 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 42822.3 հազ. դրամ (ներառյալ տարեսկզբի 5966.6 հազ.դրամ մնացորդը): Մնացորդը 31.12.2008թ. դրությամբ կազմում է 1122.2 հազ. դրամ: